

Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ ՈՒ Մ

«ԱՐՄԵՆԻԱՆ ՔԱՐԴ» ՓԲԸ-ի ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱՐԿՎՈՂ ԱՐՔԱ ՎՃԱՐԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ
ԱՆԿԱՆԽԻԿ ԵՂԱՆԱԿՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻՑ ՀԵՏՎՃԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն միջոցառման իրականացման հիմնական նպատակն է խթանել անկանխիկ եղանակով գործարքների կատարումը Հայաստանի Հանրապետությունում, ավելացնելու սպառողների կողմից ֆինանսական ժամանակակից գործիքների և տեխնոլոգիաների վերաբերյալ գիտելիքները:

2. Սույն միջոցառման մեջ կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստները՝

1) ԱՐՔԱ վճարային քարտեր՝ «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի կողմից գործարկվող ԱՐՔԱ վճարային համակարգի ներքո գործող ԱՐՔԱ ապրանքային նշանով վճարային քարտեր, այդ թվում՝ այլ վճարային համակարգերի հետ համատեղ (co-badge) թողարկվող վճարային քարտեր,

2) ֆինանսական կազմակերպություն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխան լիցենզիայի հիման վրա գործող բանկերն ու օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը կամ Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխան լիցենզիայի հիման վրա վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունները, որոնք հանդիսանում են «Արմենիան Քարդ» ՓԲԸ կողմից գործարկվող ԱՐՔԱ վճարային համակարգի անդամ կամ մասնակից,

3) բանկային հաշիվ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 912-րդ և 928.9-րդ հոդվածներով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բանկային հաշիվ, որին փոխանցվում են շահառուների հետվճարների գումարները,

4) շահառու՝ ՀՀ հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանք ունեցող՝ բանկի ֆիզիկական անձ հաճախորդ, ում անվամբ բացվել է բանկային հաշիվ, որին կցված է ԱՐՔԱ վճարային քարտ,

5) ՊՈՍ-տերմինալ՝ վճարային քարտ կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող ՀՀ տարածքում գործող վճարային գործիքներ, ինչպես նաև ֆիզիկական կամ վիրտուալ (էլեկտրոնային առևտրի կետ սպասարկող) սարք, որի միջոցով հնարավորություն ունեն ընդունել անկանխիկ ձևով վճարում:

6) հետվճար՝ հաշվետու ժամանակահատվածում (տվյալ ամսում) շահառուի կողմից ԱՐՔԱ վճարային քարտի միջոցով ապրանքների և (կամ) ծառայությունների ձեռքբերման դիմաց (բացառությամբ սույն կարգով նշված գործարքների) ՊՈՍ-տերմինալներով կատարված անկանխիկ վճարումներից հաշվարկվող գումար:

3. Սույն միջոցառման շահառուներին հետվճարը վճարվում է յուրաքանչյուր ամիս: Տվյալ ամսում վճարման ենթակա հետվճարը հաշվարկվում է այդ ամսվան նախորդող ամսում ապրանքների և (կամ) ծառայությունների ձեռքբերման դիմաց կատարած անկանխիկ վճարումների 2%-ի չափով և փոխանցվում է այն բանկային հաշվին, որով կատարված անկանխիկ գումարների և վճարումների գործարքներից հաշվարկվել է:

4. Շահառուներին հետվճարը տրամադրվում է 1,000 ՀՀ դրամը գերազանցող գործարքների դիմաց: Յուրաքանչյուր գործարքի համար շահառուներին վճարվող հետվճարը չի կարող գերազանցել 6,000 ՀՀ դրամը: Շահառուներին վճարվող հետվճարը յուրաքանչյուր հաշվետու ամսվա համար չի կարող գերազանցել 60,000 ՀՀ դրամը:

5. Հաշվետու ամսում շահառուներին միաժամանակ մեկից ավելի ԱՐՔԱ վճարային քարտերով անկանխիկ գործարքներ կատարելու դեպքում հետվճարը հաշվարկվում է և 60,000 ՀՀ դրամը կիրառվում է այդ ամսում բոլոր ԱՐՔԱ վճարային քարտերով կատարած անկանխիկ գործարքների՝ սույն միջոցառման 4-րդ կետի համաձայն հաշվարկված հետվճարների հանրագումարի նկատմամբ և

փոխանցվում է այն բանկային հաշվին, որով կատարվել է անկանխիկ վճարումների գործարքներից հաշվարկված հետվճարի հիմք հանդիսացող վերջին գործարքը:

6. Հետվճարի ամբողջ գումարի 50%-ը վճարվում է պետական բյուջեի միջոցներից, իսկ մյուս 50%-ը «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի միջոցներից: Ընդ որում, «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի կողմից յուրաքանչյուր շահառուի հետվճարից հաշվարկված եկամտային հարկի գումարին համապատասխան չափով ավելացվում է պետության կողմից տրամադրվող հետվճարի չափն այնպես, որ շահառուին փոխանցվող զուտ հետվճարը կազմի 2%:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ